

Ըներգաարդյունավետությունը և այլընտրանքային Ըներգիան գյուղական բնակավայրերում ի նպաստ Հայաստանի անտառների պահպանությանը. գործնական փորձ համայնքային մակարդակում

Ձեռուցումը Հայաստանի գյուղական բնակավայրերում. հիմնական խնդիրներ, հնարավոր լուծումներ


Հայաստանի գյուղական բնակավայրերում բնակչության մոտ 70%-ը ջեռուցումն ապահովելու համար օգտագործում է վառելիքայտ՝ հաճախ որպես առաջնային վառելիք:

Վառելիքայտի պահանջարկը զգալի գերազանցում է դրա առաջարկը և Հայաստանի անտառների բնական վերականգնման հնարավորությունները, ինչը հանգեցրել է անտառների դեգրադացիային և անտառածածկ տարածքների կրճատմանը:

Գոմաղբը լայնորեն օգտագործվում է գյուղական բնակավայրերում որպես վառելիք, ինչը նվազեցնում է դրա՝ որպես արժեքավոր օրգանական պարարտանյութ օգտագործելու հնարավորությունը:



Տնային տնտեսություններում մեծ են ջերմային կորուստները՝ պայմանավորված ներկայիս ջեռուցման ձևերի և տնային տնտեսությունների ցածր Ըներգաարդյունավետությամբ: Վառելիքայտի և գոմաղբի օգտագործումը նվազեցնելու համար Ըներգաարդյունավետության բարձրացման և այլընտրանքային Ըներգիայի հիմնական հնարավորություններն են տների ջերմամեկուսացումը, արդյունավետ ջեռուցման սարքերի և բավարար չոր վառելիքայտի օգտագործումը, այլընտրանքային կենսավառելիքի (ծղոտի բրիկետ, կենսագազ) և Ըներգիայի (արևային) օգտագործումը և այլն: Իրազեկության բարձրացման և հզորությունների ստեղծման գործողությունները պետք է անդրադառնան բնակչության ծախսերի և շրջակա միջավայրի վրա ազդեցությանը, Ըներգախնայողության առկա հնարավորություններին և այլ հարցերին: Խնդիրների լուծման ֆինանսական մեխանիզմները կարող են ներառել պետության կողմից խրախուսման ծրագրեր, միկրոֆինանսավորման հնարավորություններ և այլն:





Տների
ջերմամեկուսացումը
կարող է առնվազն 40%-ով
նվազեցնել ջեռուցման
կարիքները



Ավանդական վառարաններն
ունեն ցածր՝ 40-50%
Էներգաարդյունավետություն




Ժամանակակից
վառարանների
արդյունավետությունն
կարող է լինել 75-80% և
ավելին



Չոր՝ մոտ 20% խոնավություն
ունեցող վառելափայտն ավելի
արդյունավետ է և ավելի շատ
ջերմություն է ապահովում, քան
կիսաչոր կամ խոնավ փայտը

Ներկայիս ջեռուցման ձևերը անհարմարություններ են ստեղծում ընտանիքների և մասնավորապես կանանց համար, որոնք ավելի շատ ժամանակ են անցկացնում տանը: Բնակիչները ստիպված են տրամադրել լրացուցիչ ժամանակ և միջոցներ՝ կոշտ կենսավառելիքով ջեռուցումն ապահովելու համար:



ԵԿՈՍԵՐՎ ծրագրի շրջանակներում իրականացվել է սոցիալ-տնտեսական ուսումնասիրություն՝ կոշտ կենսավառելիքով ջեռուցման ձևերի, նախասիրությունների և հեռանկարների վերաբերյալ: Հարցումներին մասնակցել են 380 փայտ օգտագործող բնակիչներ ծրագրի պիլոտային համայնքներից: Ուսումնասիրության հիմնական արդյունքներն են.

1. Տնային տնտեսություններում ձմռանը ջեռուցվում է բնակելի տարածքի 62-81%-ը:
2. Կանայք և տղամարդիկ ներգրավված են վառելափայտը և գոմաղբը նախապատրաստելու և ջեռուցումն ապահովելու գործում. կանայք և տղամարդիկ համարյա նույնչափ ժամանակ են տրամադրում գոմաղբի նախապատրաստման համար:
3. Ներկայիս ջեռուցման ձևերն առաջացնում են ներտնային օդի աղտոտում և բացասաբար են ազդում առողջության վրա (շնչառական խնդիրներ, աչքերի և մաշկի գրգռում և այլն):
4. Անտառամերձ տարածքներում որպես վառելիք նախընտրում են վառելափայտը, իսկ անտառից հեռու տարածքներում ավելի լայնորեն օգտագործվում է նաև գոմաղբը:



5. Որպես վառելիք վառելափայտի ընտրությունը պայմանավորված է հետևյալ գործոններով. մատչելիություն, օգտագործման հարմարավետություն, այլընտրանքի բացակայություն և հասանելիություն: Գոմաղբի ընտրության հարցում գործոնները նույնն են, բացի հարմարավետությունից:
6. Ծղոտի բրիկետի օգտագործումը լայն տարածում չունի: Այն կարող է ավելի լայն օգտագործվել, եթե լինի հասանելի, ունենա մրցակցային գին և կայուն որակ, ինչպես նաև եթե լինեն դրա օգտագործման համար պիտանի ջեռուցման սարքեր:
7. Էներգաարդյունավետության բարձրացման կամ ջեռուցման համակարգը փոխելու կամ այլ վառելիքի անցնելու դեպքում ներդրում կատարելու անհրաժեշտությունը հաճախ խնդիրներ է առաջացնում բնակիչների համար:


Հայաստանում էներգաարդյունավետ վառարանների և ծղոտի բրիկետի օգտագործման խթանում

ԷԿՈՍԵՐՎԻ պիլոտային գործողությունների հիմնական արդյունքները


Վառարանների էներգաարդյունավետության (ԷԱ) գնահատումը որպես բայլ կոշտ կենսավառելիքով աշխատող ջեռուցման սարքերի էներգաառդիտի և ստանդարտների կիրառման ուղղությամբ: Գնահատվել են ենթադրաբար բարձր ԷԱ ունեցող թվով 10 վառարաններ:

Բարձր՝ 70-80% ԷԱ ունեցող վառարանների 3 մոդելի առանձնացում: Ընտրված մոդելները.

- ունեն միջին շուկայական գին
- հարմարեցված են օգտագործողների կարիքներին
- հարմար են վառելափայտի և բրիկետի օգտագործման համար



ԷԿՈՍԵՐՎԻ պիլոտային համայնքներ



Ընտրված մոդելների վառարանների պատրաստում համայնքներում աշխատող տեղի վարպետների կողմից:

Ավելի քան 70 շահառու ընտանիքներ ձեռք են բերել ԷԱ վառարաններ ծրագրի կողմից 50% համաֆինանսավորմամբ վառարանի համար և հավելյալ 25% համաֆինանսավորմամբ, եթե շահառուն որպես վառելիք օգտագործում է նաև ծղոտի բրիկետ:

Տեղեկությունների տարածում և փորձի փոխանակում տեղական գործընկերների և շահագրգիռ կողմերի հետ՝ ԷԱ օգուտների և ԷԱ վառարանների ու այլընտրանքային վառելիքի վերաբերյալ:

Իրականացնող գործընկեր.
«Շրջակա միջավայրի կայունության աջակցման կենտրոն» ԶԿ (ՇՄԿԱԿ ԶԿ/ESAC NGO)



Շահառուներն ասում են...

«Նոր վառարանով մենք չենք օգտագործի ծմռան համար պատրաստած ամբողջ վառելիքը: Տանը ավելի շատ տարածք ենք ջեռուցում և շատ ավելի հարմարավետ է:»

- Մարինե Մկրտչյան, Գյումրի, Լոռու մարզ

«Նախկինում շատ ժամանակ էի ծախսում գոմաղը պատրաստելու և պահեստավորելու համար: Նոր վառարանը և ծղոտի բրիկետի օգտագործումը զգալիորեն խնայում են իմ ժամանակը:»

- Դանեստ Բաբայան, Չորավան, Կոտայքի մարզ

«Վառարանը շատ հարմար է նաև բրիկետի համար: Այս տարի իմ նախկինում չօգտագործվող տարածքում կցանեն լրացուցիչ 2 հա ցորեն և ստացած ծղոտը կփոխանակեն վառելիքային բրիկետի հետ:»

- Դասմիկ Հարությունյան, Չորավան, Կոտայքի մարզ

«Գյուղում պատմել եմ իմ նոր լավ վառարանի մասին: Ավելի քան 10 ընտանիք ձեռք են բերել մեր վարպետների կողմից պատրաստված նույն վառարանից: Դետագայում այն ավելի լայն տարածվելու հնարավորություն ունի:»

- Արմինե Գալստյան, Վարդաբլուր, Լոռու մարզ

Փորձի տարածում

Մեծ Պառնի շրջանառու հիմնադրամը՝ ՇՄԿԱԿ ԶԿ-ի կողմից իրականացվող գյուղական բնակավայրերում ԷԱ վերաբերյալ ԳԷՅ/ՓԴԾ ծրագրի հետ համատեղ կիրառել են ԷԿՈՍԵՐՎՈՒ մշակված վառարանների ԷԱ գնահատման մոտեցումը: Գնահատվել է վառարանի ևս մեկ մոդել, որը ցույց է տվել ԷԱ բարձր ցուցանիշ:

Տարբեր մոդելների 45 ԷԱ վառարան պատրաստվել են տեղի վարպետների կողմից և համաֆինանսավորման սկզբունքով տարածվել Լոռու, Արագածոտնի և Շիրակի մարզերում նշված ԳԷՅ/ՓԴԾ շրջանակներում:

Ավելի քան 60 ԷԱ վառարան պատրաստվել է տեղի վարպետների կողմից և տրամադրվել սոցիալապես անապահով ընտանիքներին Լոռու մարզում՝ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի դոնորական աջակցության ծրագրով:

Հայաստանում Էներգաարդյունավետ վառարանների և ծղոտի բրիկետի օգտագործման խթանում ազգային մակարդակում. հիմնական ռազմավարական ուղղություններ

- Ջեռուցման սարքերի և կոշտ կենսավառելիքի ստանդարտների կիրարկում:
- Ջեռուցման սարքերի և կոշտ կենսավառելիքի հավաստագրման և որակի վերահսկման ինստիտուցիոնալ հզորությունների ստեղծում:
- Էներգիայի, անտառի և գյուղատնտեսության ոլորտային ռազմավարական ծրագրերում Էներգաարդյունավետության և այլընտրանքային կենսավառելիքի համապատասխան դրույթների արտացոլում և իրականացում:
- Միջոլորտային համագործակցություն համայնքային զարգացման, Էներգիայի, անտառների և գյուղատնտեսության ոլորտներում, բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավում:
- Ջեռուցման սարքերի և այլընտրանքային կենսավառելիքի արտադրության տեղական հզորությունների ստեղծում:
- Ֆինանսական և շուկայավարման մեխանիզմների ապահովում, հասանելի ֆինանսավորում և խթաններ գյուղական բնակչության համար:
- Իրազեկության բարձրացում Էներգաարդյունավետության և այլընտրանքային Էներգիայի առավելությունների վերաբերյալ:



Էներգաարդյունավետության և այլընտրանքային Էներգիայի տարբեր միջոցառումների համադրումը կարող է ապահովել վառելիքայտի առավել մեծ խնայողություն և նպաստել անտառների պահպանությանը, ինչպես նաև բարելավել կենսամակարդակը և Էներգաանվտանգությունը գյուղական բնակավայրերում:



ԷԿՈՍԵՐՎԻ Էներգիայի բաղադրիչը Վրաստանում. Էներգաարդյունավետ վառարաններ և չոր վառելիքայտի օգտագործում գյուղական համայնքներում (Ախմետա համայնք, Կախեթի)

Հիմնական գործողություններ և արդյունքներ.

- Մշակվել է Ախմետայում Էներգաարդյունավետության ուղղությամբ պիլոտային գործողության հայեցակարգ՝ Վրաստանի անտառի ազգային ծրագրին համահունչ:
- Վրաստանի տեխնիկական համալսարանի (ՎՏՀ) կողմից մշակվել է փայտով աշխատող վառարանների ԷԱ-ն և հզորությունը գնահատելու ծախսարդյունավետ մեթոդաբանություն՝ ըստ ISO/DIS 13336 և CEN/prEN 13240 ստանդարտների:
- Ընտրվել և գնահատվել է ԷԱ վառարանների 3 մոդել (ԷԱ 70-85%, պիտանի սնունդ պատրաստելու համար, հասանելի գին, կանանց առաջարկների հիման վրա կատարված բարելավումներ):
- Մշակվել է չոր վառելիքայտի տրամադրման մեխանիզմ և մեկնարկել է իրազեկության բարձրացման բարոզարշավ՝ ուղղված տնային տնտեսությունների ներգրավմանը:
- Պիլոտային գործողությանը մասնակցել է 41 ընտանիք: Նրանք ձեռք են բերել ԷԱ վառարաններ 50% համաֆինանսավորմամբ, օգտագործել են չոր վառելիքայտ, հավաքագրել են տանը ջեռուցման հետ կապված տվյալներ, տներում բարելավվել է ջերմամեկուսացումը:
- Համեմատության համար 11 ընտանիք օգտագործել են իրենց հին վառարանները և հավաքագրել տվյալներ: Որպես խրախուսում հաջորդ ձմեռ նրանք կստանան ԷԱ վառարաններ՝ 50% համաֆինանսավորմամբ:
- Արագ Էներգաառուդիտի հիման վրա ՎՏՀ-ն մշակել և տրամադրել է տներում ջերմային կորուստները և վառելիքայտի սպառումը նվազեցնելու առաջարկներ: